Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Հեքիաթների տեղն ու դերը , դաստիարակչական նշանակությունը 1-ին դասարանցիների ստեղծագործական կարողությունների ձևավորման հարցում մայրենիի դասերին:
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Գայանե Անդրեասյան Համլետի 077870093 Դասվար gayane.and76@gmail.com Մայրենի,մաթեմատիկա,ես և շրջակա աշխարհը,կերպարվեստ,տեխնոլոգիա, երաժշտություն 1-4-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Երևանի Ստ. Զորյանի անվան հ. **56** հիմնական դպրոց ՊՈԱԿ Հրաչյա Քոչար 13 շենք 010-272020 school56@schools.am yerevan_school56@mail.ru https://yerevan56.schoolsite.am//

Նպատակը եւ հետազոտական հարցը	Նպատակը՝ ներկայացնել տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունները հեքիաթի ուսումնասիրման հանապարհով: Հարց՝ Արդյո՞ք հեքիաթների ուսկնդրումը 1-ին դասարանում նպաստում է աշակերտների ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• լեզվական գրագիտություն և կարողունակություն, • սովորել սովորելու կարողունակություն, • ինքնահանաչողական և սոցիալական կարողունակություն,
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Թիրախային խումբը կրտսեր դպրոցի 1-ին դասարանցիներն են Հեքիաթների ուսումնասիրումն ունի խիստ որոշակի նպատակներ ու խնդիրներ. այն մատաղ սերնդի աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայնման, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման, տարաբնույթ ունակությունների, հմտությունների բացահայտման ու զարգացման, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի կարևորագույն միջոցներից մեկն է և պատասխանատու մանկան դաստիարակության գործում: Մասնակցել է 25 աշակերտ, 15աղջիկ և 10տղա:

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Մեդիա գործիքներ,դասագրքեր,բնագիր, տեսաֆիլմեր, օժանդակ գրականություն, կիրառվել բանակական մեթոդ, հարցաթերթիկ
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	1.08.2023-10.09.2023

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Ժողովրդական հեքիաթները մշակվել են տարբեր ժողովուրդների դասական գրողների կողմից: Օրինակ, Ա. Ս. Պուշկինն ուսումնասիրել ու մշակել է ռուսական բազմաթիվ հեքիաթներ: Ժողովրդական հեքիաթների հանդեպ անսահման սեր է ունեցել Հ. Թումանյանը: Նրա դուստրը՝ Ն. Թումանյանը, իր հուշերում գրում է հոր խոսքերը. <<Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ... հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. Նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում>>[3,էջ14]: **1.** Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Ծաղկաքաղ հայկական հուշարձանների. «Ճանաչի՛ր երկիրը քո» մատենաշարի Գ գիրք, Երևան, 2006, 140 էջ:

Հետազոտության ընթացքը	

ԳԼՈՒԽ **1**

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Հեքիաթի տեսակները. ընդհանուր բնութագիրը

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ և խոր լավատեսությամբ: Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ բուսակենդանական, հրաշապատում և իրապատում:



Կենդանական հեքիաթներն առաջացել են խոր հնադարում, դեռևս ձայն ժամանակ, երբ մարդը նոր էր սկսում կենդանիներին ընտելացնել, դրա համար էլ այս հեքիաթներում գործող անձերը հիմնականում կենդանիներն են:

Այս բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է իր բարդ և բազմապիսի փոխհարաբերություններով: Իրապատում հեքիաթները լինում են՝ կենցաղային, հերոսական, սոցիալական բնույթի և այլն:

Հրաշապատում հեքիաթները նախնադարյան մարդու ստեղծագործություններն են, վառ երևակայության, հոգիների, կախարդական աշխարհի և առհասարակ գերբնական երևույթների հետ կապված պարզ պատմություններ են: Նրանց հերոսներին օգնում կամ խանգարում են թռչող գորգն ու գավազանը, ցախավելը, չար կախարդները ու բարի փերիները:

Կախարդական հեքիաթների հիմքում ընկած է չարի ու բարու պայքարը, որն ավարտվում է բարու հաղթանակով, և ընթերցողի մեջ առաջանում է հավատ չար ուժերի կործանման անխուսափելության նկատմամբ:

Կենդանական հեքիաթների բնորոշ գծերից են կենդանիների և բույսերի անձնավորումը, երբ նրանց վերագրվում են մարդկային բնավորության գծեր: Բուսակենդանական հեքիաթի կառուցվածքը պարզ է, բացակայում են կախարդական երևույթներն ու առարկաները: Հեքիաթի հիմնական հերոսները կենդանիներն ու բույսերն են: Նրանցից յուրաքանչյուրը պատկերվում է իրեն հատուկ գծերով: Օրինակ՝ աղվեսը խորամանկ է, նապաստակը՝ վախկոտ, գայլը՝ ագահ և այլն:

Հեքիաթում ներկայացվում է կենդանու ոչ միայն տվյալ հատկանիշը, այլև չարի ու վատի

կործանումը : Օրինակ՝ <<Ուլիկը>> հեքիաթում մայր այծը իր սրած պոզերով պատռում է գայլի փորը և ազատում իր ուլիկին: Բուսակենդանական են օրինակ, <<Ճամփորդները>> /Հ.Թումանյան/, <<Նապաստակն ու ոզնին>> /Գրիմ եղբայրներ/ և այլն:

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված են ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ. Աղայանը, Հ Թումանյանը, Ստ. Զորյանը և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: Մայրենի դասագրքերում զետղված են նաև օտար հեղինակների հեքիաթներ, որոնք նույնպես անհրաժեշտություն են՝ այլ ժողովուրդների կյանքին, կենցաղին, մտածողության եղանակին ու ստեղծագործություններին ծանոթանալու համար:

Հեքիաթները բարի ու գեղեցիկ ավարտ ունեցող իրական կամ երևակայական բնույթի մտացածին պատմություններ են, որտեղ արտահայտված են մարդկանց երազանքներն ու ազնիվ ցանկությունները:Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենասիրված ու ամենատարածված ստեղծագործություններից են: Դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ:

Այն հաճախ սկսվում է<< Լինում է, չի լինում>>, <<Կար, չկար>>, <<Ժուկով ժամանակով>> բառերով: Այս պայմանական սկիզբը առկա է շատ ժողովուրդների մոտ: Ժողովրդական հեքիաթները մշակվել են տարբեր ժողովուրդների դասական գրողների կողմից: Օրինակ, Ա. Ս. Պուշկինն ուսումնասիրել ու մշակել է ռուսական բազմաթիվ հեքիաթներ: Ժողովրդական հեքիաթների հանդեպ անսահման սեր է ունեցել Հ. Թումանյանը: Նրա դուստրը՝ Ն. Թումանյանը, իր հուշերում գրում է հոր խոսքերը. <<Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ... հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. Նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում>>[3,էջ14]:

Հեքիաթները դարեր շարունակ կրթել ու դաստիարակել են մատաղ սերնդին, առաջացրել ջերմ հավատ աշխատավոր ժողովրդի, բարու, ճշմարտության, սոցիալական արդարության հաղթանակի նկատմամբ: Հեքիաթները սովորեցրել են գնահատել մարդու դրական գծերը, հարգել խելքը, ազնվությունը, նվիրվածությունը, վեհանձնությունը, ատել հիմարությունը, վախկոտությունը, ագահությունը, նախանձը:Այսպիսով, հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու,

համոզմունքների ու զգացմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը:

1.2.Հեքիաթի ուսումնասիրման մեթոդական քայլաշարի դիտարկում

Հեքիաթը որպես գրական ժանր ունի ուսումնասիրման առանձնահատկություններ, սակայն առավելապես ուսումնասիրվում է ինչպես պատմվածքը՝ բացատրական ընթերցանության մեթոդիկայի բոլոր բաղադրիչներով: Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Հեքիաթների ուսումնասիրումն իրականացվում է երկու հիմնական փուլով՝ բովանդակության ընկալում և երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր են դիպաշարի յուրացման և դրանից բխող կրթական ու դաստիարակչական խնդիրների լուծման համար:

Հեքիաթների ուսումնասիրությունը պետք է այնպես իրականացնել, որ իրականն ու երևակայականը թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ և թե՛ առանձին-առանձին հասնեն աշակերտների գիտակցությանը: Այս նպատակով՝ կարդալուց հետո նախ պետք է պարզաբանել բովանդակությունը: Ինչպես պատմվածքի դեպքում անցկացնել նախապատրաստական զրույց, սովորեցնել կարդալ, անծանոթ բառերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը վերարտադրել մանրամասնորեն կանգառներով ու համառոտ, ընտրովի, փոխելով ու ստեղծագործելով: Այս ընթացքում անհրաժեշտ է գործող անձանց ու նրանց կատարած գործողությունները ներկայացնել և դիտարկել հարցերով ամփոփել և այլն: Այնուհետև անհրաժեշտ է բացահայտել ստեղծագործության հեքիաթային կամ երևակայական կողմը, կատարել բարոյախրատական եզրակացություն՝ համապատասխան առած-ասածվացքներ գտնելով և հեքիաթի հետ կապելով:

Հեքիաթի դիպաշարի վերլուծության ճանապարհով աշակերտներին պիտի բացատրել, որ հեքիաթում մի խումբ հերոսներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներին հասնելու մղումով: Հեքիաթում իրար դեմ կանգնած են բարի և չար ուժեր: Հեքիաթն անպայման ավարտվում է բարի ուժերի հաղթանակով, որն առանց դժվարությունների չի իրականացվում. գլխավոր հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջով, կատարում իրենց առջև դրված անիրականանալի պայմանները, հաղթահարում անհաղթահարելի արգելքներ, և ամենակարևորը՝ բարին միայնակ չի գործում. նրան օգնում են հրաշագործ ուժերը: Դիտարկելով այս գաղափարները աշակերտն ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակը հեշտ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պիտի մեկնաբանվի և իմաստավորվի նաև աշակերտի կյանքի օրինակով:

Տարրական դասարաններում նախատեսված է նաև հեքիաթների ունկնդրում. պատմում է ոչ միայն ուսուցիչը, այլև ինքնուրույն ընթերցանության դասերին իրենց կարդացածը վերարտադրում են աշակերտները:

Հեքիաթը նախ պետք է պատմել այնպես, որ այն աշակերտներին հաճույք պատճառի, նրանք մտովի տեսնեն այդ պատկերները, հետո նոր կարդալ հեքիաթն ու վերլուծել՝ գործածելով դիդակտիկ պարագաներ: Այս դեպքում օգնում են հստակ կառուցված խոսքը, պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, որը պետք է տարբերվի պատմվածքն ընթերցելու ձայնից: Հեքիաթի բովանդակությունը լսելուց հետո աշակերտներին պիտի հանձնարարել, որ իրենք վերարտադրեն հեքիաթի բովանդակությունը՝ հարազատ մնալով նրա լեզվին ու ոճին, հաճախ պատմեն հենց այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը, գործածեն հերոսների խոսքերը, ժողովրդի բառն ու բանը: Անշուշտ, այդ դեպքում պիտի բացատրվեն անծանոթ բառերը, կամ աշակերտներին իրենք պետք է ասեն հեքիաթում գործածված բառերի և արտահայտությունների գրական համարժեքները:

Մեր ուսումնասիրությունների և մանկավարժական պրակտիկանների ընթացքում բացահայտեցինք,որ կրտսեր դպրոցականներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին:

Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել նաև ուսուցչի կամ աշակերտների <<կազմած>> նկարներով պլանը: Սա պատմելու կարողության ձևավորման առաջին փուլն է : Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ կանգառներով ընտրովի, այնպես էլ, որպես ակնատես շարքերով, խմբերով, դերերով, մրցութային և այլ եղանակներով:

Երեխաների համար հանձնարարելի են հեքիաթների ուսումնասիրման պատմողական և հորինողական ձևերը, որոնք հետաքրքրություն են առաջացնում հեքիաթների ուսումնասիրության նկատմամբ:

Պատմողական ձևով անցնելիս հեքիաթը չի ընթերցվում, այլ պատմվում է ուսուցչի կողմից՝ գեղարվեստական պատմումի և արտահայտչական միջոցների լայն օգտագործմամբ: Այս դեպքում երեխաները ոչ միայն գիտակցորեն են յուրացնում բովանդակությունը, այլև ընդօրինակում են ուսուցչի պատմելաձևը, խոսքի շեշտադրությունն ու ձայնի հնչերանգը:

Հեքիաթի ուսումնասիրման հորինողական ձևն իրականացվում է ստեղծագործական մեթոդով է և ավելի լայն կիրառություն ունի տարրական դպրոցում՝ մայրենիի ուսուցման գործընթացում. աշակերտներին հնարավորություն է տրվում յուրովի վերարտադրելու հեքիաթի բովանդակությունը, փոփոխություններ մտցնելու դեպքերի զարգացման մեջ՝ հավատարիմ մնալով հեքիաթի ընդհանուր ոգուն: Միշտ չէ, որ պետք է պատրաստի հեքիաթներ տանք աշակերտներին, որպեսզի նրանք վերարտադրեն այն պասիվ կերպով. Երբեմն կարելի է հանձնարարել նույն թեմայով հեքիաթներ հորինել, որը զարգացնում է նրանց

երևակայությունը և մղում ստեղծագործելու:

Հեքիաթի ուսումնասիրում կարելի է անցկացնել նաև ակտիվ մեթոդներով: Օրինակ՝

<u>Հեքիաթի բեմականացում</u>

ա/ Ընտրել այնպիսի հեքիաթ, որի բեմականացմանը կարող է մասնակցել որքան հնարավոր է շատ երեխա:

բ/ Կատարել դերերի բաշխում:

գ/ Որևէ մեկին դեր չհասնելու դեպքում նրան ներառել հագուստի կամ դեկորների ձևավորման գործընթացում:

Հեքիաթի ուսունասիրման այս ձևը կնպաստի թիմային աշխատանքի արդյունավետությանը , աշակերտների միջանձնային հարաբերությունների ձևավորմանը:

Տարրական դասարաններում մեծ տեղ է տրվում նաև կարդացած հեքիաթի բովանդակության շուրջ իրականացվող ստեղծագործական աշխատանքին: Այս խնդրի լուծման նպատակով աշակերտներին հանձնարարվում է հեքիաթների բովանդակությունը շարունակել: Կամ՝ ուսուցիչն առաջարկում է հեքիաթի սկիզբը, իսկ աշակերտներից յուրաքանչյուրը հյուսում է հեքիաթի շարունակությունը:

Կարելի է նաև հորինել նոր հեքիաթ՝ հիմք ընդունելով հեքիաթի հենակետային բառերը:

Մեր փորձով համոզվել ենք, որ միայն ճիշտ մեթոդիկայով իրականացված հեքիաթի շուրջ աշխատանքի դեպքում է հնարավոր աշակերտներին փոխանցել այն ամենը, ինչը պետք է նրանց ինքնահաստատման և զարգացման համար, օգնել ինքնավստահության ձեռքբերմանը, հաղթահարել բարդությունները, դիմագրավել կյանքի դժվարությունները և վերջապես դրական հատկություններ ձևավորել, որն էլ նրանց առաջին քայլն է դեպի կյանք:[1]

Հեքիաթի բնագրի շուրջ աշակերտների ակտիվ ու ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու տեսանկյունից շատ արդյունավետ է նաև նրա որևէ դրվագի վերարտադրումը նկարի միջոցով: Այս դեպքում աշակերտները վերապրում են հեքիաթի բովանդակությունը, կերպարների կատարած գործողությունները:

Հեքիաթի ուսումնասիրման հիմնական խնդիրներն են՝ հեքիաթի դերի ու նշանակության ճանաչում, սովորողների բարոյական որակների ձևավորումը, հեքիաթի գեղարվեստական առանձնահատկությունների ընկալում: Ուսուցման գործընթացի ուղղվածությունը՝ <<Մտագրոհ հեքիաթ բառով>>, հեքիաթի լուռ և բարձրաձայն ընթերցում, բնագրային աշխատանք՝ բառերի բացատրություն , ամփոփ հատվածների առանձնացում և վերնագրում, բովանդակության վերարտադրում, կերպարների բնութագրում,

[1] Հարությունյան Վ. Հեքիաթների դաստիարակչական դերը, Լույս,1974 ,էջ 93:..

եզրահանգում:

Հեքիաթի ուսումնասիրման գործընթացում կարևորվում են յուրահատուկ որակների զարգացումը բառերի պատկերային զգացողություն, ստեղծագործական մտածողություն, հերոսների վարքի դրդապատճառների ընկալում, ապրումակցում և այլն: Այս բնութագրիչներն ընդհանուր առմամբ ենթադրում են հատուկ գեղագիտական ընկալում, որը ձևավորվում է հատկապես հեքիաթի ուսումնասիրման միջոցով: Հետևաբար հեքիաթների վերլուծության ժամանակ ուսուցչի խնդիրն է՝ օգնել սովորողներին հասկանալու հեքիաթի հատկանիշները:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՔԱԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԻ ԴՐՎԱԾՔԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1.Տարրական դասարանների մայրենիի դասագրքերի հնարավորությունները հեքիաթի միջոցով աշակերտների խոսքի զարգացումը

Մեր ավարտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից ուսումնասիրեցինք տարրական դասարանների մայրենիի դասագրքերը: Մեզ հետաքրքրում էր, թե դրանցում ինչ տեղ ուեեն հեքիաթները,առավելապես՝ հեքիաթներին կից տրված մեթոդական կառույցը. արդյո՞ք կան հարցեր և առաջադրանքներ, որոնք կարող են նպաստել հեքիաթների ուսումնասիրման ճանապարհով կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը:Ներկայացնենք մեր ուսումնասիրությունների արդյունքները:

ԴԱՍԱՐԱՆԸ, ԴԱՍԱԳԻՐՔԸ, ՀԵՂԻՆԱԿԸ,	ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ, ԷՋ, ՀԵՂԻՆԱԿ,
1-դասարան, <<Այբբենարան>>,հեղինակ՝ Վ. Սարգսյան **2022**:	<<Ծիտը>> հեղ., Հ. Թումանյան(էջ 148) (կենդանական հեքիաթ)
<<Մայրենի **1**>> հեղինակ Վաչագան Ա.Սարգսյան,Եր.,**2022**:	<<Երգող բառ>>, հեղ.՝ Վաս (էջ *10*) (հրաշապատում հեքիաթ)
<<Մայրենի **1**>> հեղինակ Վաչագան Ա.Սարգսյան,Եր.,**2022**թ	<<Հրաշագործ>>, հեղ.՝ Վաս (էջ *14*)հրաշապատում
<<Մայրենի **1**>> հեղինակ Վաչագան Ա.Սարգսյան,Եր.,**2022**թ	<<Խելացի ծիտ>> (էջ *55*)կենդանական հեքիաթներ

<<Մայրենի 1>> հեղինակ Վաչագան Ա.Սարգսյան,Եր.,2022թ

<<Մայրենի 1>> հեղինակ Վաչագան Ա.Սարգսյան,Եր.,2022թ

<<Մայրենի 1>> հեղինակ Վաչագան Ա.Սարգսյան,Եր.,2022թ

<<Քաջ Նազար>>, հե.՝ Հովհաննես Թումանյան (էջ 56)հրաշապատում հեքիաթներ

<<Ուլիկ>>, հեղ.՝ Հովհաննես Թումանյան 58),կենդանապատում հեքիաթներ

<<Ով աշխատի նա կուտի>> (էջ 60)կենդանապատում հեքիաթներում

2.2.Հեքիաթի ուսումնասիրման նպատակները ու դրանց լուծման մեթոդական առանձնահատկությունները

Տարրական դպրոցում հեքիաթների ուսումնասիրումն ունի խիստ որոշակի նպատակներ ու խնդիրներ. այն մատաղ սերնդի աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայնման, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման, տարաբնույթ ունակությունների, հմտությունների բացահայտման ու զարգացման, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի կարևորագույն միջոցներից մեկն է և պատասխանատու մանկան դաստիարակության գործում:

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում հեքիաթների դերն ու նշանակությունը ցայտուն կերպով ակնառու է դառնում հատկապես, երբ դպրոցում կազմակերպվում են աշակերտների անմիջական մասնակցությամբ հեքիաթ-ներկայացումներ, զանազան բեմականացումներ: Աշակերտները, սկսած առաջին դասարանից, մեծ ոգևորությամբ հանդես են գալիս հեքիաթների հերոսների դերերով (օրինակ՝ <<Կարմիր գլխարկը>>, <<Շունն ու կատուն>> և այլն):

Տարրական դպրոցում հեքիաթների ուսումնասիրման ընթացքում աշակերտները ծանոթանում են դրանց ժանրային առանձնահատկություններին, կարողանում են գործնականում տարբերել դրանք: Դպրոցի ու ուսումնական գործընթացի գերնպատակն է կրթել և դաստիարակել համակողմանի և ներդաշնակ զարգացած սերունդ , ուստի այդ գործում հեքիաթն ունի հզոր դաստիարակչական ներուժ, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հեքիաթի ինչպես ունկնդրումը, այնպես էլ ընթերցումը երբեմ երեխաներին ծանծրույթ չեն պատճառում: Հեքիաթների ընթերցանության ընթացքում աշակերտները ծանոթանում են նաև նոր, անծանոթ բառերի, բացատրում են դրանց իմաստը, գործածում են խոսքում, դուրս են գրվում ուղղագրական դժվարություն ունեցող բառերը, դրանցով տարատեսակ աշխատանքներ են կազմակերպվում, որը նպաստում են սովորողների բառապաշարի հարստացմանը և ակտիվացմանը:

Հեքիաթն այն ստեղծագործություններից է, որը կարելի է կարդալ դերերով և բեմականացնել: Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության, կերպարների, նրանց վարքի վերլուծություն, հեքիաթի երևակայական կողմի բացահայտում: Հեքիաթների ժանրային առանձնահատկությունները, դրանց կախարդական, հրաշապատում բնույթը, հերոսների չար և բարի կերպարներում օգնում են երեխաներին տարբերել չարն ու բարին, մարդկային փոխհարաբերություններում դրսևորվող հատկանիշները: Երեխաների ճանաչողական հետաքրքրությունների բավարարման և ազգային հոգեկերտվածքի զարգացման գործընթացում հատկապես արժեքավոր են ժողովրդական հեքիաթները: Վերջիններիս հանդեպ անսահման սեր է ունեցել Հովհաննես Թումանյանը. «Հեքիաթներն անդունդներ են խորը, անծայր, անվերջ..., հարուստ աշխարհ»: Հեքիաթն ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները չեն կարողանում հեքիաթներ ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում: Ղազարոս Աղայանը հեքիաթը համեմատում է մայրական կաթի հետ «Իմ աչքում հեքիաթը բարոյական և

մտավոր շատ ու շատ նման է մայրական կաթին..»: http//gir.am:[]

Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ հեքիաթի ուսումնասիրման ընթացքում շատ կարևոր է նաև ուսուցչի խոսքի արտահայտչականությունը, դիմախաղը: Վերջիններս պատմելիս օգնում են, որ երեխաները խորությամբ ըմբռնեն ստեղծագործության գաղափարը, կերպարների արարքները[2] :

Հեքիաթների ուսումնասիրման ընթացքում տարբեր մեթոդական հնարներ կիրառելը նպաստում է նաև աշակերտների խոսք կառուցելու կարողության զարգացմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ձևավորվում են նաև համագործակցության, փոխօգնության, փոխզիջման կարողություններ:

Հեքիաթի ուսումնասիրման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ կարևոր է կատարել բացատրական աշխատանք՝ գտնելով ընդհանրություններն ու տարբերությունները հեքիաթի հերոսների միջև: Հեքիաթի երևակայական կողմը բացահայտելիս ուսուցիչը չպետք է ակտիվ դեր կատարի, այլ պետք է թողնի, որ աշակերտներն իրենք որոշեն, թե ինչին են հավատում ինչին՝ ոչ:

Մեր ուսումնասիրությունների և մանկավարժական պրակտիկայի ընթացքումհեքիաթների բովանդակության շուրջ իրականացնում էինք զրույցներ, քննարկումներ, որոնք լուծեցին մի քանի կարևոր խնդիրներ՝ զարգացավ սովորողների մտածողությունը, աշակերտները ձեռք բերեցին հաղորդակցական հմտություններ, սովորեցին շա-ՐԱԴՐԵԼ իրենց մտքերը, պասիվ ունկնդրողից դարձան ակտիվ մասնակիցներ, հարստացավ բառապաշարը, ստեղծագործական մտածողությունը:

Աշակերտները սովորեցրին առանձնացնել հեքիաթի հիմնական միտքը, որոշել դեպքերի հաջորդականությունը, համեմատել ու հակադրել, ճշտել հերոսների կարծիքը և փորձել են այն հիմնավորել :

Հեքիաթների ուսումնասիրումը բարենպաստ նախադրյալներ է ստեղծում սովորողների փոխուսուցման, համագործակցության, կոլեկտիվ գործունեության, ակտիվության, մրցակցության, կարողությունների և զարգացման համար:

Քանի որ ցանկացած դասի ժամանակ սովորողների վրա ուսուցչի հուզական ներգործությունն առկա է, ուստի դասը պետք է կազմակերպել՝ կիրառելով մանկավարժական մեթոդների համալիր, դիդակտիվ նյութեր՝ տեսասահիկներ, նկարներ, պաստառներ, ցուցադրել հեքիաԹին համապատասխան մուլտֆիլմ, սահիկ, ամենը զուգակցելով ուսուցչի խոսքին, դիմախաղին:

Այսպիսով, հեքիաթի ուսումնասիրումը տարրական դպրոցում գործնականում ապահովում է գիտելիքների յուրացման համակարգվածությունն ու հաջորդականությունն, սերտ կապ է ձևավորվում կրթության և դաստիրակության միջև, սովորողներին սերնդից սերունդ փոխանցում մարդկության կուտակած փորձն ու գիտելիքները կազմավորում է արժեհամակարգ:

Հեքիաթները խթանում են աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը, ազգային ավանդույթների պահպանմանն

[2] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր.,Զանգակ,2018,էջ293:

ու արժեհամակարգի ձևավորմանը [2, էջ 210]

Հեքիաթի ուսումնասիրման ժամանակ ուսուցիչն իր առջև դնում է հետևյալ հիմնական նպատակները՝

1. զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակությունները,
2. ձևավորել տեսական և գործնական այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն աշակերտին հեքիաթի գաղափարի ընկալման ենթատեքստի,կառուցման , դիպաշարի տրամաբանության :
   1. սովորեցնել բնագրի շուրջ, աշխատանքի գիտակցական քայլաշարը :

Հեքիաթների ուսումնասիրումը լուծում է նաև կրտսեր դպրոցականների հետևյալ դաստիակչական խնդիրները՝

- ☒ սերմանում է բարություն, մարդասիրություն,
- ☒ քննադատողական վերաբերմունք ազգության, կաշառակերության հանդեպ,
- ☒ սովորեցնում է տարբերություն չդնել հարուստի և աղքատի միջև,
- ☒ հարգել մեծի խոսքը,
- ☒ լինել ազնիվ, ճշտախոս և այլն,

Հենց խնդիրների ակտիվ քննարկումների ժամանակ են սովորողները ազատ, անկաշկանդ արտահայտում իրենց մտքերը, ընտրում են տեղին ու դիպուկ:

Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկն է երեխային տալ այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել, այլ ձեռք բերել ինքնուրույն մտածելու և գործելու կարողություններ, հաղորդակցվելու անկաշկանդ մթնոլորտ: Մեր մանկավարժական պրակտիկայի ժամանակ համոզվեցինք, որ աշակերտին հնարավորություն են տալիս ինքնարտահայտվելու: Ուսուցչի խնդիրն է ճիշտ ուղղորդել հեքիաթների հերոսների արարքները բացահայտելու, չարի և բարու մասին պատկերացումների ձևավորման ընթացքում:Այս ընթացքում Այս նպատակով հեքիաթը կարդալուց հետո պետք է աշակերտին հնարավորություն տալ, որ քննարկեն, վերլուծեն հեքիաթի չար և բարի հերոսների արարքները, դատողությունները և եզրակացություններ ներկայացնեն, հակադրվեն հայտնի դիրքորոշումներին,հիմնավորեն իրենց ներկայացրած տեսանկյունները Հենց այսպիսի ակտիվ քննարկումների ժամանակ են սովորողները ազատ, անկաշկանդ արտահայտում իրենց մտքերը, ընտրում են բառապաշարը և այն գործածում են տեղին ու դիպուկ:

Տարրական դպրոցում հեքիաթի շուրջ աշխատանքի կարևոր բաղադրիչ է նաև հեքիաթի վերարտադրումը: Կարդացած հեքիաթի տարբեր ձևերով, վերարտադրումը նպաստում է ոչ միայն աշակերտների աշխարհայացքի ձևավորմանը, այլև նրանք կարողանում են գիտակցված խոսել կարդացած հեքիաթի շուրջ, հաղորդել դիպաշարի տրամաբանությունը, բնութագրել գործող անձանց, նկարագրել բնության տեսարանները և այլն: Սակայն որպեսզի

հասնելիք վերը նշված նպատակներին, անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1. Ձևավորել սովորողների կարդալու կարողությունը՝ պահպանելով բոլոր որակական հատկանիշները, և տիրապետել հեքիաթի բովանդակության ընկալման և վերլուծության հնարներին, որն նշանակում է ներգրավել ընթերցողական ճիշտ գործունեության մեջ:
2. Հեքիաթի միջոցով սովորողներին ուղղորդել դեպի մարդկային փոխհարաբերությունների, բարոյագեղագիտական արժեքների աշխարհ:
3. Զարգացնել կրտսեր դպրոցականի հաղորդակցական մշակույթը, ստեղծագործական ունակությունները:

Այս խնդիրների լուծմանը մեծապես նպաստում են ուսուցման ակտիվ փոխներգործուն մեթոդները, որոնք նպաստում են՝

Անառարկելի է, որ հեքիաթն ունի հզոր դաստիարակչական արժեք, նրանում ներկայացվում են բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք արտահայտվում են հերոսների արարքների, երկխոսությունների և մենախոսությունների միջոցով: Հեքիաթի ուսումնասիրումը մայրենիի դասերի ընթացքում իրականացվում է հիմնական քայլաշարով՝

1-ին քայլ՝

- հեքիաթի հնչնուրույն ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
- հեքիաթի ընթերցում կարդալու տարբեր տեսակներով,
- հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,

- հեքիաթի բարոյախրատական իմաստի (դաստիարակչական արժեքի) վերհանում,
- կերպարների գործողությունների քննարկում
- հեքիաթի լեզվի և ոճի վերլուծություն
- ամփոփում:

Հեքիաթների դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործում անգնահատելի է: Այն նպաստում է երեխաների գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա:

Հեքիաթների հերոսների խիզախությունը, կամքը, ազնվությունը, արդարությունն պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամությունն վառ օրինակ է երեխաների ճիշտ դաստիարակության համար:

Հեքիաթը մատչելի լեզվով երեխաներին սովորացնում է դիտարկել չարն ու բարին: Նրանք ավելի հեշտ են ընկալում հեքիաթի գաղափարը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները:

Հեքիաթն այն ստեղծագործություններից է, որը կարել է կարդալ դերերով և բեմականացնել: Կարդալու այս տեսակները մեծ բավականություն են պատճառում մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության, կերպարների, վարքի վերլուծություն, որից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը: Այս գործընթացը աչքի է ընկնում իր զգացմունքայնությամբ, խոսքի հստակությամբ և արտահայտչականությամբ:

Պատմողի ձայնը, հեքիաթային ոճը, դիմախաղերը օգնում են, որ աշակերտները խորությամբ ըմբռնեն ստեղծագործության գաղափարը, կերպարների արարքները:

Աշակերտներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը, առավել ևս՝ շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին: Հեքիաթը, տարբեր մեթոդական հնարներ կիրառելով ուսումնասիրումը, նպաստում է աշակերտների խոսք կառուցելու կարողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը համագործակցության, փոխօգնության, փոխզիջման ունակությունների զարգացմանը: Հեքիաթի ուսումասիրման ժամանակ,կարևոր է նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ կարևոր է մեկնողական աշխատանք գտնելով ընդհանրություններն ու տարբերություններն հեքիաթի հերոսների միջև:

Տարրական կրթության առաքելությունն ամփոփվում է հետևյալ առաջնահերթ նպատակներով, որոնք կարելի է լուծել հեքիաթների ուսումնասիրման միջոցով:

- մտավոր, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության միջոցով.
- լայն մտահորիզոնով ստեղծագործ անձի դաստիարակություն՝
- այնպիսի դաստիարակություն, որն աշակետներին կդարձնի ազատ և անկախ, ունակ սեփական պարտականությունները, ինքնուրույն քննարկելու և պատասխանատվությամբ կատարելու սեփական պարտականությունները, դաստիարակություն՝ հիմնված հումանիզմի համընդհանուր սկզբունքների վրա՝

պահպանելով սեփական մշակույթն ու հարգելով այլոց մշակույթի յուրահատկությունները:

Մեր դասալսումների և ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք, թե հեքիաթների ուսումնասիրման ընթացքում ինչ դժվարություններ են ծագում մայրենիի դասերի ընթացքում ինչ դժվարություններ են ծագում մայրենիի դասերի ընթացքում ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար: Ներկայացնենք այդ դժվարությունների:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.Ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում բացահայտել հեքիաթների գաղափարները, կռահել ենթատեքստը	1. Դժվարությամբ են ընկալում հեքիաթի գաղափարը, չեն կարողանում հակիրճ ներկայացնել այն:
2.Ուսուցիչների մեծ մասը դասի ժամանակ չի կարևորում մեթոդի բաղադրամասերի կիրառումը:	2.Չեն ըմբռնում դիպաշարի տրամաբանականհաջորդականությունը, չեն կարողանում վերլուծել կերպարների վարքը:
3.Ուսուցիչները դժվարանում են աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել առաջադրանքի պահանջի վրա	3.Պատմելիս դժվարանում են հիշել հեքիաթի բառապաշարը և պատմելիս չեն գործածում այն:
4.Ուսուցիչները հիմնականում չեն կարողանում կազմակերպել բնագրի շուրջ աշխատանքը, կապակցված խոսքի զարգացման փուլը:	4. Դժվարանում են դերերով կարդալիս , արտահայտիչ չեն ներկայացնում կերպարի խոսքերը:
5.Զգիտեն հեքիաթներում գործածված բարբառային բառերի իմաստները, չեն կարողանում բառարանների միջոցով դրանք բացահայտելը:	
6.Ոչ բոլոր ուսուցիչներն ունեն ՏՏ-ից օգտվելու ունակություններ:	

2.3.ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հարցախույզի առաջին հարցով մեզ հետաքրքրում էր, թե ուսուցիչների կարծիքով կարդալու, գործընթացում ո՞ր տեսակն է առավել արդյունավետ հեքիաթների գաղափարի բացահայտման կարողության ձևավորման:



Տրամագիր **1.**

Վերոհիշյալ հարցին հարցախույզին մասնակից ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ.նրանց մեծամասնությունը՝ 34%-ը, կարծում է, որ հեքիաթների գաղափարի բացահայտման գործում առավել արդյունավետ է կիրառել կանգառներով, 24%-ը՝ շարունակելով կարդալը: Այս ընթացքում, աշակերտները կարողանում են բացահայտել հեքիաթի գաղափարը ավելի հեշտ ու արդյունավետ: Հարցման մասնակիցների 23%-ը նախընտրում է ընտրովի ընթերցանության տեսակը, 19%-ի կարծիքով դերերով կարդալն ավելի է հեշտացնում հեքիաթի գաղափարի բացահայտումը, աշակերտներին դուր է գալիս դերերով կարդալ և մանրամասնորեն ներկայացնել այն: Այսպիսով մենք եզրակացրինք,որ հարցմանը մասնակից ուսուցիչների մեծամասնությունը հեքիաթի գաղափարի բացահայտում կանգառներով ընթերցանության միջոցով է անում:

2.Ձեր կարծիքով՝ հեքիաթ պատմելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են



Տրամագիր **3**

Հարցախույզի միջոցով փորձեցինք պարզել, թե ուսուցիչների կարծիքով հեքիաթ պատմելու կարողության ձևավորմանը մեծապես ինչն է նպաստում. հարցման մասնակից դասվարների 21%-ը նշել է, որ օգնում է պլանի առկայությունը:Ուսուցիչների 19%-ը նշել է պատմելու տեսակները պատասխանը,17%-ը ստեղծագործաբար պատմելը, 16%-ը ՝ այլ տարբերակ, 14%-ը՝ մի քանի անգամ ընթերցելը, 13%-ը՝ կարդալու տեսակները:

3.Հեքիաթի կերպարների գործողությունների ընկալմանը մեծապես նպաստում է



տրամագիր4

Հարցախույզին մասնակից ուսուցիչները հարցին, թե հեքիաթի կերպարների գործողությունների ընկալմանը մեծապես ինչն է նպաստում պատասխանել են հետևյալ կերպ.Դիպաշարի բացահայտում 25%, զրույց՝ 22%, պատմում՝ 20%, գաղափարի բացահայտում 18%, այլ պատասխան՝ 15%:

4.Ինչպե՞ս են հեքիաթները նպաստում աշակերտների խոսքի զարգացմանը



տրամագիր5

Հարցման մասնակից դասվարները պատասխանել են, որ դերային խաղերը հաճախ են նպաստում 32%-ը, հաճախ պատմել հանձնարարելով պատասխանն է ճշել, իսկ բարձրաձայն ընթերցանություն՝ 25%-ը, այլ տարբերակ 15%-ը:

5.Հեքիաթի գաղափարի բացահայտման ուղղությամբ աշխատանքերն արդյունավետ է կազմակերպել.



Տրամագիր 6

Հարցմանը մասնակից դասվարները ՝ 35%-ը ճշել են, որ գաղափարի բացահայտման ուղղությամբ աշխատանքները արդյունավետ է կազմակերպել խթանման փուլում: 32%-ը կերպարների գործողությունները վերլուծելու: 18%-ը կարդալու տարբեր տեսակների միջոցով, 15%-ը պատմելու տեսակների կիրառման ճանապարհով:

6. Հեքիաթի շուրջ աշխատանքի ընթացքում նպատակահարմար է կիրառել.



տրամագիր7

Հարցախույզի մասնակից ուսուցիչները հեքիաթի շուրջ աշխատանքի ընթացքում նպատակահարմար են գտնում կիրառել զննական պարագաներ՝ 32%-ը, նրանց 35%-ը կիրառում են տարբեր մեթոդներ և հնարներ, որպեսզի արդյունավետ աշխատի հեքիաթի շուրջ:Աշխատանքի կազմակերպման ձևեր պատասխանն են ընտրել 29%-ը, 6%-ը նշել է այլ տարբերակ պատասխանը:

Այսպիսով, մեր հարցախույզի արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրեց այս եզրակացության, որ բոլոր ուսուցիչները կարևորում են կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում հեքիաթների ուսումնասիրումը: Նրանք հիմնականում տիրապետում են հեքիաթի ուսումնասիրման քայլաշարին և նրա իրականացման մեթոդիկային: Սակայն մեր դասալսումների, մանկավարժական պրակտիկայի և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք , որ ընդհանուր առմամբ, այս գործընթացում առկա են լուրջ բացթողումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1.Արդի մասնագիտական գրականության մեջ ըստ արժանավույն են դիտարկվում հեքիաթի ուսումնասիրման մեթոդական առանձնահատկությունները՝ առավել ևս՝ հեքիաթների տեղն ու դերը , դաստիարակչական նշանակությունը 1-ին դասարանցիների ստեղծագործական կարողությունների ձևավորման հարցում մայրենիի դասերին:

2.Հեքիաթի ուսումնասիրման գործընթացը նպաստում է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանը, կապակցված խոսքի զարգացմանը, արժեհամակարգի ձևավորմանը միայն այն դեպքում, երբ այդ գործընթացը իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչների ճիշտ կազմակերպման և աշակերտների ակտիվության առավելագույն մակարդակի ապահովման:

3.ՀՀ. դպրոցների տարրական դասարանների ուսուցիչները կարևորում են հեքիաթների ուսումնասիրման դերը կրտսեր դպրոցականի Անձի ձևավորման գործընթացում այդ նպատակով կիրառում են տարաբնույթ մեթոդական հնարներ, սակայն դեռևս անավարտ է տեխնիկական միջոցներ կիրառելու նրանց կարողության մակարդակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Պետրոսյան Մ., Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան մեթոդական ձեռնարկ, Ե., 2004:

2. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի մեթոդիկա, Զանգակ 97, Երեւան 2009թ:

3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե. «Զանգակ», 2018:

4. Աստղիկ Բալայան «Մայրենի լեզվի դասերին կիրառվող մեթոդների ընտրությունը», Գիտամեթոդական հանդես՝ «Նախաշավիղ», N3-4, 2009), էջ 37-43։

5. Թորոսյան Կ., Ջիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը, 2-րդ դասարան, Զանգակ, 2016:

6. Թորոսյան Կ., Ջիբուխչյան Կ., Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը, 3-րդ դասարան, Զանգակ, 2017:

7. Թորոսյան Կ., Ջիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը, 4-րդ դասարան, Զանգակ, 2018:

8. Հայոց լեզու եւ գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 1-9-րդ դաս., 2011:

9. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2012:

10. Մանուկյան Ս. Պ, Մանկավարժական եւ աշակերտական դասանպատակները, Լուսաբաց 2003:

11. Մանուկների Աստվածաշունչ:

12. Մկրտիչ Խերանյան, Սասնա տուն, «Էդիթ Պրինտ», 2015թ:

13. Միրումյան Մ., Փուլային ուսուցման եղանակ, Երեւան, 2014թ.:

14. Մնացականյան Ե., Գրականագիտական ուղեցույց - բառարան, Երեւան, 2013:

15. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Մայրենի 2 դասագիրք, Ե., «Մանմար», 2018:

16. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Մայրենի 3 դասագիրք, Ե., «Մանմար», 2018: